Հավելված N 1

Հաստատված է համայնքի ավագանու
23.05.2018թ. N 3-Ա որոշմամբ

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ

N	Իրազեկման հեղինակի և հավաքի կազմակերպչի տվյալները	Իրազեկման օրը, ժամը	Հավաքի բնույթը և նպատակը	Հավաքի վայրը	Հավաքի օրը, սկիզբը և ավարտի մոտավոր ժամանակը	Մասնակիցների սպասվող թիվը	Լիազոր մարմնի որոշումը

Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

Հավելված N 2

Հաստատված է համայնքի ավագանու
23.05.2018թ. N 3-Ա որոշմամբ

Կ Ա Ր Գ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույնով սահմանվում է Աշտարակ համայնքում հանրային հավաքներ անցկացնելու իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը:

2. Գրանցամատյանի պահպանումը և վարումն իրականացվում է Աշտարակ հայանքի ղեկավարի լիազորած անձի պատասխանատվությամբ:

3. Գրանցամատյանը տպագրվում է մեկ օրինակից, էջերը համարակալվում են ըստ հերթականության:

4. Գրանցամատյանը կարվում է և ստորագրվում է Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից, հաստատվում է համայնքի ղեկավարի կողմից:

5. Հանրային հավաքներ անցկացնելու մասին լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության:

6. Հանրային հավաքների անցկացման իրազեկումների գրանցամատյանը ըստ սյունակների լրացվում է հետևյալ ձևով՝

1) 1-ին սյունակում թվերով գրառվում է իրազեկման մուտքագրման հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրառվում է իրազեկման հեղինակի և հավաքի կազմակերպչի տվյալները (կազմակերպիչների անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, հեռախոսահամարները, փոստային և էլեկտրոնային հասցեները).

3) 3-րդ սյունակում գրառվում է իրազեկման ներկայացման օրը, ժամը.

4) 4-րդ սյունակում գրառվում է հավաքի բնույթը և նպատակը (հանրահավաք, երթ).

5) 5-րդ սյունակում գրառվում է հավաքի վայրը.

6) 6-րդ սյունակում գրառվում է հավաքի օրը, սկիզբը և ավարտի մոտավոր ժամանակը.

7) 7-րդ սյունակում գրառվում է մասնակիցների սպասվող թիվը.

8) 8-րդ սյունակում գրառվում է լիազոր մարմնի որոշման վերաբերյալ տեղեկատվություն (որոշման ամսաթիվը, համարը):

7. Լրացուցիչ տեղեկությունների համար նախատեսված տեղում գրառվում են հետևյալ տեղեկությունները՝ հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները, կարգադրիչների նախատեսվող թիվը, վարձակալությամբ տրված տարածքներում վարձակալի համաձայնությունը, իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում՝ իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշումը և այլն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն